

Բայց ամիրաներուն վէպը՝ Զօլան իսկ չդիտէ ու չկըր-
նար տալ մեզի ինչպէս որ արժան է:

Այդ իրական մութ վէպէն է՝ որ կը փորձեմ այսօր
բանալ փոքրիկ սրահ մը, տեղիս ժամանակիս և պա-
րագաներու ներածի՛ն չափ սրահակ մը, զոր թերեւս
ուրիշ պատեհներով կարենամ ալ ընդարձակել ու վե-
րածել մանրանկար ցոլցադրութեան մը:

*

Արդի սերունդին բարեբաղդներէն համարուելու եմ՝
որ խոր տղայութեանս տեսած եմ մէկ հատիկ շոջ ա-
միրայ մը, ու պիտի կըրնամ տալ ազօտ դադափար մը
իր ու թերեւս՝ իրմով՝ միւս ամիրաներուն ալ կենդա-
նադիրին վրայ: Գարձեալ նոյն կարապետ ամիրան էր
այն իմ տեսածս:

Հազիւ հինգ վեց տարեկան կայի՝ երբ լսելով իրմէն
չատ վախցողներուն շնչիւնը՝ թէ կարապետ ամիրան
կամ Աղան (սոսկ, առանց յատուկ անունի, Աղան)
կու գայ կոր, վաղցիտ իճատիյէի զառ ի վերին ծայրը,
ուրկէ պիտի անցնէր Ներսէս Աշտարակեցի կաթողի-
կոսին բարձր թեկադրութեամբն և Սեթեան Յովհաննէս
վարդապետին ու Տէրոյինց պատուելիին աստուածա-
բանական ոչ բարձր առաջնորդութեամբը՝ Շահնազա-
րեան կարապետ վարդապետը դատող և դատապար-
տող ամիրան, համարձակ ճէզայիրցիին համեսուկ ու
ստին արեւելցի, Վարպէտ մարդը:

Զիւտոր էր ինք այն իրիկունք. և ձին՝ միջին արա-
զութեամբ կ'ընթանար զառ ի վերն ի վեր. ետեւէն
էր իր անբաժան ծառան՝ Գասպարը. քանի մը անցորդ
հայ ալ՝ բարեւի կեցան հոն անցողաբար: Ինք Խալֆայ
Ամիրան՝ իր ձիուն վրայ ուղղաբերձ մը կեցած՝ վաթ-
սուն և հինգնոց մը կերելէր. Գրիգոր էֆէնտի Գարա-
կէօզեանի ձիաւոր գնացքին բաւական նման ձուլուածով
մը, բայց աւելի՛ երկայնահասակ, աւելի՛ տարէց, ու աւելի՛
և աւելի՛ հանդուշն: Ունէր լայնաբաց ֆէտի մը ներքեւ կի-
սով չափ զստուած անկիւնաւոր ճակատ մը, թանձր լուրջ
և քացուած յօնքեր, խոշոր զատազատ ու զարմացա-
կան աչքեր, ճերմակ և յորդկէկ պեխեր, նոյն գոյնով
և թուլցած այտեր, բերանն ալ՝ բաւական խոշոր: Կլո-